



**ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ՄԻՋԵՎ**

ԵՎ

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ**

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ ՀՀ ԷՆ ՄՍԳ)՝ ներկայացված գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար տիկին Զրիստիսե Համբարյանի կողմից՝ որպես կողմ,

և

Եվրամիության մտավոր սեփականության գրասենյակը (այսուհետ՝ ԵՄՄՍԳ)՝ ներկայացված գործադիր տնօրեն պարոն Զրիստիան Արշամբոյի կողմից՝ որպես կողմ,

այսուհետ միասին՝ Գրասենյակներ,

շեշտադրելով այն հանգամանքը, որ.

- (1) ԵՄՄՍԳ-ն պատասխանատու է ԵՄ ապրանքային նշանների և գրանցված Համայնքի դիզայնի կառավարման համար: Այն նաև աշխատում է ԵՄ անդամ պետությունների մտավոր սեփականության (այսուհետ՝ ՄՍ) գրասենյակների և միջազգային գործընկերների հետ՝ առաջարկելու ապրանքային նշանների և դիզայնի գրանցման համանման փորձ Եվրոպայում և աշխարհում,
- (2) Հայաստանի Հանրապետությունն մտավոր սեփականության գրասենյակը (ՄՍԳ) արդյունաբերական սեփականության գրանցման համար պատասխանատու պետական մարմինն է: ՄՍԳ-ն գործում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմում և պատասխանատու է մտավոր սեփականության քաղաքականության իրականացման համար,
- (3) ԵՄ անդամ չհանդիսացող երկրների ՄՍ գրասենյակների հետ ՄՍ իրավունքների ոլորտում միջազգային համագործակցության խթանումն ու ամրապնդումը ԵՄՄՍԳ-ի միջազգային համագործակցության բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնական տարրն է՝ նախատեսված ԵՄՄՍԳ 2025 թ.

ռազմավարության ծրագրով, որը հաստատված է գրասենյակի կառավարման խորհրդի կողմից՝ Եվրամիության ապրանքային նշանների մասին (ԵՄ) 2017/1001 կանոնակարգի 151-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ինչպես նաև Ներքին շուկայում ներդաշնակեցման գրասենյակին (ապրանքային նշաններ և դիզայն) մտավոր սեփականության իրավունքների կիրառմանը վերաբերող առաջադրանքներ վստահելու մասին ԵՄ No 386/2012 Կանոնակարգի 2-րդ հոդվածի 1-ին մասի (հ) և 2-րդ հոդվածի 2-րդ (մ) մասի համաձայն, ներառյալ՝ պետություն-մասնավոր հատվածի ներկայացուցիչների հավաքագրումը որպես մտավոր սեփականության իրավախախտումների եվրոպական օբսերվատորիա և ԵՄ 2012/28/ հրահանգը՝ անտիպ աշխատանքների թույլատրելի օգտագործման վերաբերյալ:

Հաշվի առնելով՝

- (1) Գրասենյակների պատրաստակամությունը զարգացնելու ավելի ամուրի գործընկերային հարաբերություններ, որոնք կարող են հանգեցնել նրանց միջև ռազմավարական գործընկերության հաստատմանը,
- (2) Գրասենյակների շահագրգռվածությունը ընդլայնելու համագործակցությունը և մտավոր սեփականության կառավարման ոլորտում փորձի փոխանակումը՝ իրենց ՄՍ համակարգերի և ծառայությունների ամրապնդման նպատակով,
- (3) այն, որ Գրասենյակներն ունեն մարդկային, տեխնիկական և նյութական միջոցներ՝ սույն Փոխըմբռնման հուշագրում ամրագրված նպատակներն իրականացնելու համար,

Հանգել են հետևյալին.

Հոդված 1 Առարկան

1. Փոխըմբռնման հուշագիրը սահմանում է այն ժամկետներն ու պայմանները, որոնց համաձայն Գրասենյակները փոխադարձ համագործակցություն կիրականացնեն առաջնահերթ համարվող ոլորտներում:
2. Սույն Փոխըմբռնման հուշագիրը չի խոչընդոտում ներկայումս իրականացվող կամ ապագայում իրականացվելիք ծրագրերի շրջանակներում համատեղ նախագծերի ստեղծմանը:
3. Սույն փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվող ցանկացած գործունեություն նախապես պետք է ներառվի Գրասենյակների համապատասխան աշխատանքային ծրագրերում և պետք է համապատասխանի երկու կողմերի բյուջետային կարողություններին: Գրասենյակները պարտավորվում են իրականացնել ցանկացած գործունեություն՝ իրենց համապատասխան կանոնների և գործելակերպի լիարժեք պահպանմամբ:
4. Իրավական դաշտը սահմանում է, որ միջազգային համագործակցությունը ԵՄՄԱԳ-ի կանոնադրական պարտականություններից է:

Յոդված 2

Համագործակցության ուղղությունները

1. Առանց վնասելու Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ապագա նմանատիպ ծրագրի համատեքստում իրականացվող որևէ համագործակցության՝ Գրասենյակները երկկողմ համագործակցություն կիրականացնեն ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների, ինչպես նաև ՄՍ իրավունքների կիրարկման, ՄՍ կրթության և ՄՍ իրազեկման ոլորտներում: Այս գործողությունները կթիրախավորեն ՄՍԳ-ին, նրա անձնակազմին, ՄՍ օգտագործողներին և իրավատերերին՝ հատկապես կենտրոնանալով փոքր և միջին ձեռնարկությունների վրա:
2. Գրասենյակները կիրականացնեն համագործակցություն՝ իրենց համապատասխան օրենսդրության, կանոնակարգերին, կիրառելի օրենքներին և միջազգային պայմանագրերին համապատասխան:

ա) Տեղեկատվական գործիքներ. Գրասենյակները կարող են ավելի սերտորեն համագործակցել հանրությանը հասանելի առցանց որոնման համակարգերում ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների տվյալների հրապարակման հետ կապված հարցերում: Օրինակ, Գրասենյակները կարող են համագործակցել, որպեսզի ՄՍԳ ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների տվյալներն ինտեգրվեն ԵՄՄՍԳ-ի կողմից մշակված առցանց տեղեկատվության և դասակարգման համակարգերում, մասնավորապես՝ TMview, DesignView, TMclass և DesignClass:

բ) Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) համակարգեր ՄՍ կառավարման համար. Գրասենյակները կարող են համագործակցել գիտելիքի և փորձի փոխանակման, միմյանց SS լուծումների մշակման և ընդլայնման, ավտոմատացման և արդիականացման սխեմաների հետ կապված աշխատանքներում: Գրասենյակները հանդիպումներ կանցկացնեն SS ոլորտի իրենց փորձագետների միջև՝ քննարկելու SS հիմնական խնդիրները և նախագծերը՝ կենտրոնանալով ՄՍ համակարգերի արդիականացման և ներքին ու արտաքին լուծումների կատարելագործման վրա: Հանդիպումները հնարավորինս կանցկացվեն առցանց:

գ) Դասակարգման և ՄՍ-ին առնչվող այլ տվյալների բազաները.

Գրասենյակները կարող են ամրապնդել իրենց համագործակցությունը ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների տվյալների բազաների վերաբերյալ, ինչպես, օրինակ, դասակարգմանը վերաբերող տվյալները: Սա կարող է տարածվել նաև ՄՍ այլ տվյալների բազաների վրա, որոնք կարող են մշակվել և հետաքրքրել Գրասենյակներին:

դ) Ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնի ոլորտներում լավագույն փորձի համապատասխանեցումը: Գրասենյակները կարող են համագործակցել ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների փորձաքննության պրակտիկայի և մեթոդաբանության համապատասխանեցման ուղղությամբ:

ե) Կապերի հաստատման ու իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումները. Գրասենյակները կարող են կազմակերպել կապերի հաստատման և իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ինչպիսիք են Եվրամիությունում և արտերկրում ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների պաշտպանությանը վերաբերող սեմինարները, և կարող են համագործակցել ՄՍ կրթությանն ու իրազեկմանը վերաբերող նախաձեռնություններում:

զ) Վերապատրաստման ծրագրերը. Գրասենյակները կարող են համագործակցել ՄՍ վերապատրաստման ծրագրերի ուղղությամբ, որոնք նախատեսված են իրենց անձնակազմերի կամ լայն հասարակության համար: Համագործակցության շրջանակը կարող է ներառել սեմինարների կամ աշխատաժողովների համատեղ կազմակերպում, էլեկտրոնային ուսուցման դասընթացների ապահովում և միմյանց վերապատրաստման ծրագրերին մասնակցություն: Գրասենյակները կփորձեն ընդլայնել համագործակցությունը ԵՄՄՍԳ-ի ակադեմիայի և ՄՍԳ-ի վերապատրաստման նախաձեռնությունների, ինչպես նաև իրենց համապատասխան գործունեության և զարգացումների վերաբերյալ տեղեկատվության կանոնավոր փոխանակման ուղղությամբ:

է) Ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնի փորձագետների հանդիպումները. Գրասենյակները կարող են անցկացնել փորձագետների խմբերի հանդիպումներ գիտելիքի ու փորձի փոխանակման համար և քննարկել ապրանքային նշանների ու արդյունաբերական դիզայնի ոլորտում առկա հիմնական խնդիրները: Հանդիպումները հնարավորինս կանցկացվեն առցանց:

ը) Ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների վիճակագրություն. Գրասենյակները կարող են համագործակցել ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների վիճակագրական տվյալների փոխանակման ուղղությամբ: Փոխանակվող վիճակագրական տվյալների շրջանակը կարող է քննարկվել փորձագետների հանդիպման ընթացքում: Հանդիպումները հնարավորինս կանցկացվեն առցանց: Փոխադարձ համաձայնությամբ՝ Գրասենյակները կարող են քննարկել Գրասենյակներից մեկի կողմից բարձրացված ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների վիճակագրության վերաբերյալ համագործակցության այլ ուղղություններ ու կարող են համագործակցել այլ երկրների մտավոր սեփականության լիազոր մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես օրինակ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հետ, մասնավորապես՝ ապրանքային նշանների և արդյունաբերական դիզայնների վիճակագրության հետ կապված գործունեության վերաբերյալ:

թ) Փորձագետների և անձնակազմի այլ ներկայացուցիչների համար գործուղումները. Գրասենյակները կարող են առաջարկել գործուղման հնարավորություններ իրենց փորձագետների և անձնակազմի այլ ներկայացուցիչների համար՝ Գրասենյակների կողմից փոխհամաձայնեցված պայմաններով և տևողությամբ:

ժ) Որակի կառավարման համակարգերը. Գրասենյակները կարող են փոխանակել տեղեկատվություն, գիտելիք և փորձ իրենց որակի կառավարման միասնական համակարգերի և մեթոդաբանության վերաբերյալ՝ որակն ու արդիականությունը կատարելագործելու համար: Հանդիպումները հնարավորինս կանցկացվեն առցանց:

ի) Տնտեսության մեջ ՄՍ-ին առնչվող ուսումնասիրությունները. Գրասենյակները կարող են տեղեկատվություն փոխանակել տնտեսության մեջ ՄՍ-ին առնչվող ուսումնասիրությունների մեթոդաբանության և ձևավորման վերաբերյալ: Հանդիպումները հնարավորինս կանցկացվեն առցանց:

յ) Իրավակիրառման հետ կապված հարցերը. Գրասենյակները կարող են տեղեկատվություն փոխանակել ՄՍ-ի իրավակիրառման հետ կապված իրենց համապատասխան գործունեության վերաբերյալ և կարող են առանձնացնել այս առումով ընդհանուր նախաձեռնությունների մշակման ոլորտները (օրինակ՝ ՄՍ

իրավակիրառմանն առնչվող գործիքներ, իրազեկման և ՄՍ կրթության նախաձեռնություններ): Հանդիպումները հնարավորինս կանցկացվեն առցանց:

3. Գրասենյակները պարտավորվելու են ապահովել իրականացվող նախաձեռնությունների արդյունքների կայունությունը, ինչպիսիք են՝ գործիքներին, կիրառություններին և պրակտիկային վերաբերող նախաձեռնությունները:
4. Անհրաժեշտության դեպքում Հուշագրի նպատակներին հասնելու համար՝ Գրասենյակները կարող են սահմանել համագործակցության այլ ոլորտներ և դրանք ներառել սույն հուշագրում որպես հատուկ լրացում:

Հոդված 3 Իրականացումը

Համագործակցության ցանկացած ծրագրի ստեղծում պետք է ներառի մանրամասներ ծրագրի չափի, համակարգման և կառավարման վերաբերյալ, ինչպես նաև ցանկացած այլ համապատասխան տեղեկատվություն: Գրասենյակները կազմելու են երկամյա գործողությունների ծրագիր, որը կսահմանի բոլոր գործողությունները:

Հոդված 4 Տեղեկատվության և անձնական տվյալների պաշտպանությունը

1. Գրասենյակները սույն փոխըմբռնման հուշագրով նախատեսված ցանկացած գործունեության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը պետք է օգտագործեն բացառապես ներքին նպատակներով: Եթե Գրասենյակներից մեկը ցանկանում է նման տեղեկատվությունն օգտագործել այլ նպատակների համար, ապա պետք է նախապես ստանալ մյուս Գրասենյակի գրավոր համաձայնությունը:
2. Գրասենյակներից յուրաքանչյուրը երաշխավորում է, որ գաղտնի բնույթի փաստաթղթերը, տեղեկատվությունը և ցանկացած գաղտնի տեղեկությունները չեն բացահայտվելու կամ փոխանցվելու երրորդ անձանց՝ առանց մյուս Գրասենյակի նախնական գրավոր համաձայնության:
3. Փոխըմբռնման հուշագիրը չի ենթադրում Գրասենյակների միջև մտավոր սեփականության որևէ իրավունքի փոխանցում: Գրասենյակների մտավոր սեփականության իրավունքները, որոնք գոյություն ունեն մինչև սույն Փոխըմբռնման հուշագրի ստորագրումը կամ մշակվել են սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակից դուրս, ինչպես նաև դրանց հետ կապված ցանկացած կատարելագործում, փոփոխություն և/կամ ածանցյալ գործիքներ, մնում են այդ Գրասենյակի բացառիկ սեփականությունը:
4. Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում կատարվող որևէ աշխատանքի հետ կապված ցանկացած ՄՍ իրավունքի սեփականությունը պատկանում է համապատասխան գործունեությունն իրականացնող Գրասենյակին: Գրասենյակները կարող են այլնի մասին ուղղակի համաձայնության գալ փոխադարձ ստորագրված գրավոր պայմանագրով:
5. Այն դեպքում, երբ սույն Փոխըմբռնման հուշագրի իրականացումը պահանջում է անձնական տվյալների մշակում, Գրասենյակները պարտավորվում են գործել իրենց համար կիրառելի տվյալների պաշտպանության կանոնակարգերին համապատասխան: Գրասենյակները պարտավորվում են անհրաժեշտության դեպքում

սահմանել իրենց դերն ու պարտականությունները անձնական տվյալների մշակման համար՝ սույն Փոխըմբռնման հուշագրում հատուկ լրացումներ կատարելու միջոցով:

Հոդված 5 Ֆինանսավորումը

1. Փոխըմբռնման հուշագիրը չի նախատեսում գրասենյակների միջև ֆինանսական միջոցների փոխանցում:
2. Ծրագրերը, նախագծերը և հատուկ գործողությունները կֆինանսավորվեն Գրասենյակների կողմից համատեղ կամ բացառապես Գրասենյակներից որևէ մեկի կողմից՝ կախված համապատասխան բյուջետային սահմանաչափից և Գրասենյակների միջև փոխադարձ համաձայնությունից:

Հոդված 6 Շարունակականությունը

1. Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ձեռնարկվող գործողությունների իրականացման, կազմակերպման և գործունեության համար անհրաժեշտ է շարունակական աջխատանք և գնահատում: Գրասենյակները պատասխանատու են հետևյալի համար.
 - i. իրականացված գործողությունների արդյունքների գնահատում:
 - ii. նույնականացում այն ոլորտների, որոնցում համագործակցությունը պետք է ամրապնդվի և բարելավվի:
 - iii. համատեղ գործողությունների համար նոր ոլորտների սահմանում և նոր նախագծերի, ծրագրերի և հատուկ գործունեության առաջարկում:
 - iv. դեպքերի նույնականացում, երբ համագործակցությունը պետք է կասեցվի կամ դադարեցվի:
 - v. համագործակցության մեխանիզմների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում:
2. Այս շարունակական աջխատանքը կվերանայվի Գրասենյակների միջև բարձր մակարդակի տարեկան հանդիպման ընթացքում՝ ըստ փոխհամաձայնեցված ժամանակի և վայրի:

Հոդված 7 Ուժի մեջ մտնելը և դադարեցումը

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում Գրասենյակների կողմից ստորագրման օրվանից և ուժի մեջ է ստորագրման օրվանից սկսած՝ 4 տարի ժամկետով: Այն կարող է երկարաձգվել Գրասենյակների փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Գրասենյակները պարբերաբար կվերանայեն փոխըմբռնման հուշագրի բովանդակությունը և կհամաձայնեցնեն ծրագրի իրականացումը երկամյա ժամկետի կտրվածքով: Փոխըմբռնման հուշագիրը կդադարեցվի փոխադարձ համաձայնությամբ կամ Գրասենյակներից որևէ մեկի կողմից՝ մյուս կողմին նախապես 6 ամիս առաջ ծանուցելով:

Հոդված 8
Անցումային դրույթները

1. Փոխըմբռնման հուշագիրը կարող է փոփոխվել Գրասենյակների փոխադարձ համաձայնությամբ: Ցանկացած փոփոխություն պետք է լինի գրավոր և պետք է ներառի փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթվերը:
2. Սույն Փոխըմբռնման հուշագիրը չի նախատեսում Գրասենյակների համար իրավական պարտադիր կատարման պարտավորությունների կամ համապատասխան իրավունքների ստեղծում:
3. Փոխըմբռնման հուշագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված բոլոր հարցերը կամ վեճերը կլուծվեն Գրասենյակների փոխադարձ համաձայնությամբ:
4. Փոխըմբռնման հուշագրի վաղաժամկետ դադարեցումը չպետք է խոչընդոտի ընթացող որևէ ծրագրի կամ գործունեության, եթե Գրասենյակները այլ համաձայնություն ձեռք չեն բերել:
5. Եթե սույն Փոխըմբռնման հուշագիրը կրկնօրինակով ստորագրված է մեկ այլ լեզվով, և երկու լեզուներով տարբերակների միջև անհամապատասխանություն կա՝ գերակայում է անգլերեն լեզվով տարբերակը:


Ստորագրված է Ալիկանտեում (Իսպանիա) և Երևանում (Հայաստանի Հանրապետություն)՝ հայերեն լեզվով:

**Ստավոր սեփականության
գրասենյակի կողմից**



**Տիկին Զրիստինե Համբարյան
Գրասենյակի ղեկավարի
պաշտոնակատար**

ԵՄՍԳ-ի կողմից



**Պարոն Զրիստիան Արշամբո
Գործադիր տնօրեն**

Ամսաթիվ: 24.12.2021

Ամսաթիվ: 16/12/2021